Արձանագրություն N 4
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/170» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի
ПРОТОКОЛ N 4
Заседания оценочной комиссии процедуры запроса котировок под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/170"

ք. Երևան **03.06.2022թ.**
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Նազարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Նավասարդյան, Գ. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

Участвовали
Председатель комиссии: Г. Назарян,
Члены комисии: Г. Навасардян, Г. Аветисян
Секретарь комисии: С. Егиазарян

1.Տեղեկություններ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/170» ծածկագրով գնման ընթացակարգին պարզաբանման մասին հայտարարություն

(Գ. Նազարյան)

Պարզաբանման հարցադրում

Հարգելի գործընկեր, Գնման առարկայի տեխնիկական բնութագրում առկա են մի շարք վրիպակներ, որոք հակասում են գնումների մասին օրենսդրությանը, մասնավորապես՝ 1. EN 840-2:2020 ստանդարտի համաձայն արտադրված 1100L աղբարկղի քաշը չի կարող լինել 440կգ, դա վերաբերում է բեռնատարողությանը, ներառյալ աղբարկղի քաշը: 2. Մեր կողմից առաջարկվող աղբարկղներն արտադրված են EN 840-2:2020 ստանդարտի համաձայն և ունեն համապատասխան սերտիֆիկատներ: Սակայն EN 840-2:2020 ստանդարտի համաձայն նախատեսված չէ, որ 1100L աղբարկղը կարող է ունենալ «դիմային կափարիչ՝ 500մմ x 500մմ կամ 600մմ x 600մմ չափսերով», և նմանատիպ կափարիչի առակայության դեպքում աղբարկղը կարող է ունենալ 440կգ բեռատարողունակություն, ինչպես նաև նախատեսված լինել «Հետևից բեռնաթափմամբ աղբատարների համար»: Բանն այն է, որ նմանատիպ դիմային կափարիչի առկայության պարագայում, աղբարկղի կոնստրուկցիան ձևափոխվում և թուլանում է, հետևաբար չի կարող ապահովել թե 440կգ բեռնատարողություն և թե բեռնաթափվել հետևից բեռնաթափմամբ աղբատարների մանիպուլյատորների օգնությամբ: Այսպիսով 500մմ x 500մմ կամ 600մմ x 600մմ չափսերով «դիմային կափարիչ»-ը դա օպցիա է, որը փոփոխում է EN 840-2:2020 ստանդարտի համաձայն արտադրված աղբարկղների տեխնիկական հատկանիշները և շահագործման եղանակը: Իսկ եթե հնարավոր չէ նմանատիպ աղբարկղները բեռնաթափել հետևից բեռնաթափմամբ աղբատարների մանիպուլյատորների օգնությամբ, ապա ինչ նպատակով աղբարկղները պետք է ունենան աղբատարերի մանիպուլյատորների համար նախատեսված կողային բռնիչներ, որոնք ըստ ըության անիմաստ են և չեն օգտագործվում: Այսպիսով որևէ կերպ հնարավոր չէ ապահովել հրավերի տեխնիկական բնութագրում շարադրված պահանջը՝ համապատասխանությունը EN 840-2:2020 ստանդարտին, առավել ևս ներկայացնել որևէ փորձագիտական եզրակացություն ըստ էության: 3. Կարող են արդյոք դիմային կափարիչի չափերը լինել 645 x 540 մմ: 4. Բարձր խտության ցածր ճնշման առաջնային հումքի պոլիէթիլենը՝ HDPE, որից պահանջվում է, որ պետք է արտադրված լինի աղբարկղը, ինչը նաև EN 840-2:2020 ստանդարտի պահանջ է, սկսում է հալվել 115°C ջերմաստիճանում և ունի 350°C ինքնաբռնկման ջերմաստիճան: Արդյո՞ք այն բավարար չէ: Ինչ է՞ ընդհանրապես նշանակում հրդեհակայուն/չբոցավառվող պահանջը: EN 840-2:2020 ստանդարտի համաձայն հրդեհակայուն/չբոցավառվող պահանջ նախատեսված չէ: 5. Նշված է գույնը՝ կանաչ (RAL 6038), արդյոք ընդունելի են RAL 6011 և 6020 երանգները: 6. Նշված է «ապակու» համար, ի՞նչ նկատի ունեք: Միգուցե վերին կափարիչի վրա ռեզինից բացվածք ապակե տարաները գցելու համար, եթե այո, ապա քանի հատ և ինչ չափերի ռեզինից բացվածքներ պետք է ունենա աղբարկղի վերևի կափարիչը: Կանխավ շնորհակալություն:

Պարզաբանման պատասխան

1.Աղբի տեսակավորման թափոնամանների ձեռքբերման տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, թափոնամանի քաշը՝ >440կգ փոխարեն պետք է լինի քաշը՝ >45կգ (ռուսերեն տեխնիկական բնութագրում ճիշտ է գրված):

2. Սահմանված EN 840-2:2020 ստանդարտով չի արգելվում դիմային կափարիչի օպցիայի նախատեսում: Ավելին, ստանդարտը պետք է դիտարկվի EN 840 ստանդարտների շարքի հետ համակցությամբ: Կողային բռնիչներն օգտագործվում են աղբատար մեքենաների մեջ թափոնները բեռնաթափելու նպատակով:

Դիմային կափարիչի չափերը կարևոր են ընդհանուր թափոնամանի ֆունկցիոնալությունն ապահովելու տեսանկյունից: Դրանց ոչ մեծ շեղումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ թափոնամանի ֆունկցիոնալությունը չի խախտվում: Հետևապես, դիմային կափարիչի սահմանված չափերի շեղումը կդիտարկվի համարժեք, եթե այն ընկած է նվազագույն 500*500 մմ և առավելագույն 600*600 մմ չափերի սահմաններում, որոնցից թույլատրելի է ±10% շեղում (հաշվի առնելով թափոնամանի արտաքին չափերը): Տվյալ դեպքում ներկայացված 645*540մմ չափը կարող է դիտարկվել համարժեք, քանի որ 645մմ< 660մմ, իսկ 540մմ չափն ընկած է 500-600 մմ սահմաններում:

4. Բարձր խտության ցածր ճնշման առաջնային հումքի պոլիէթիլենը՝ HDPE նյութից պատրաստված լինելը բավարար է հրդեհակայուն/չբոցավառվող համարվելու համար, պայմանով, որ թափոնամանի ներկման համար նյութը բոցավառվող չէ:

5. Կանաչ գույնը պետք է համապատասխանի RAL 6038՝ ըստ տեխնիկական բնութագրի: Այլ գունային երանգներ ընդունելի չեն:

6. Վերին կափարիչի վրա կարող է նախատեսվել ռեզինե բացվածք՝ ապակե տարաները գցելու համար: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թափոնամանը նախատեսված է ընդհանուր բոլոր տեսակի ապակիների (ոչ միայն ապակե տարաների) համար, վերին կափարիչի վրա բացվածքի հատուկ չափեր ու օպցիա չի նախատեսվել: Ապակին կարող է թափոնամանի մեջ գցվել վերին կափարիչը բացելով կամ դիմային կափարիչից:

Հանձնաժողովի նախագահ՝ Председатель комиссии:		Գ. Նազարյան	Г. Назарян
Անդամներ՝ Члены комисии:		Գ. Նավասարդյան	Г. Навасардян
		Գ. Ավետիսյան	Г. Аветисян
Համակարգող՝ Секретарь комисии:		Ի. Եղիազարյան	И. Егиазарян